

ՄԱՐԴՈՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Մարդկային բովանդակ ճիգերու զանազան իրագործումներուն մեջ մարդու գերագույն տեսիլքը կմնա կատարելության իղձը: Կատարյալին իղեայը մարդուն մեջ Աստուծո ձայնն է կամ Անոր ներկայությունը: Արդարեւ, երկար դարերու ընթացքին, մարդկության ստեղծագործությունները՝ կրոնը, արվեստները, գիտությունը, փիլիսոփայությունն ու դաստիարակությունը, մեկ խոսքով՝ իմացական ջանքերուն համապարփակ նվաճումները, որ ծանոթ են մեզի քաղաքակրթությունն ընդհանուր հասկացության տակ, ձգտեր են մեկ նպատակի՝ ձերբազատել մարդը իր անկատարության տառապանքեն: Մարդու մեծագույն կարողը այս աշխարհի վրա իր կատարելության երազն է, իսկ իր տարապայման վիշտը՝ անկատարության դժբախտությունը: Մարդկային հոգիին այս հավիտենական տագնապանքին համար չըսվեցա՞վ արդոք. «Եղերուք դուք կատարեալք, որպէս և Հայրն ձեր երկնաոր կատարեալ է»: Որովհետև, մարդը իր վերնագույն վիճակին, որուն կտենչա անդադար, և որ իր բուն հակատագրին կոչումն է, կատարելության ճամփով պիտի հասնի: Վասնզի կատարելության իրագործումը պիտի ծնի իր մեջ Նոր Որակը՝ Աստվածությունը:

Պարզ նայվածք մը մեր շուրջ՝ և անա նըշմարելի կդառնա կատարելագործման այս օրենքը նույնիսկ բնության ամենահասարակ երևույթներուն և իրերուն մեջ, որ իրարմով ամբողջանալու և զիրար լրացնելու ձգտումով կարտահայտվի: Բնությունը, որ այնքան գեղեցիկ և ներդաշնակ է, կմնա թերի ստանց մարդուն: Մարդը, որ ստեղծումներուն գլուխ-գործոնն է իբրև աստվածային հիւսքանչ էակ մը, իր ամբողջականության մեջ անկալն անկատար, կմղվի ինքզինք լրացնելու համաձայն այն մտապատկերին, որ իրեն յուզա կրոնի, արվեստի և գիտության ստեղծահոծ շավիղներեն: Իր էության այբերեն արձրացող անկատարության ձայնն է, գորգգգա անբարբառ, և կըղձա ստոնցմով ամբողջացնել և ներդաշնակել իր գոյությունը: Ինքզինքին պակասավորությունը...: Ա-

տիկա մերթ հարուստին մեջ կարտահայտվի աշխարհիկ կյանքի փարթամ շքեղություններով, մերթ աղքատը դժբախտ արարած մը կընեն իր գրկանքներուն մեջ, հաճախ տգետը կտոչորեն իմաստնաճալու ծարավով և իմաստունը իրմն ներս և իրմն դուրս՝ աշխարհը նվաճելու փառասիրությամբ: Ինքզինքին պակասավորությունը: Այսինքն՝ ներաշխարհային պարսպը, ամայությունը...: Զգայաբանական վայելքներու բացակայությունը չէ ատիկա, որ մարդը կընեն ճիղն սողուն մը, և որոնց հափրացումեն վերջ կյանքի իմաստը կթվի սպառած ըլլալ: Ատիկա հոգիին հավերժական կիրքն է, որ կրցալատի վսեմագույնին իղեայով կյանքի մշտարժամ հնոցին մեջ և մետաղի մը պէս կծուվի, կվերածուլվի և բյուրագան ձևեր կստանա իր կատարյալ ու վերջնական ձևը գտնելէ սուաջ: Եվ այդ անընդմեջ ու մշտնջենական ձևափոխությունները մարդեն ներս՝ իրենց խորհրդավոր ու հակասական արտահայտություններով անկատարության ընդերկրյա խուլ ձայները չեն՝ միթէ հանուն իրենց վերջնական տարագներուն: Եվ արդարև, իր կատարելության բարձունքները գտնելու համար չէ՞, որ մարդը կվազե դարերու մեջնեն տրտում ու ողորքիչ պատրանքներով: Ահա Մակեդոնացի մը և Դիոգիսես մը: Մեկուն համար աշխարհի անսահման տարածությունները նեղ կուգային, որոնց աշխարհակայությամբ կը ձգտեր ան իր մեջ և իրմն ներս՝ իր իսկատիպը գտնել: Հակառակ քնտենն՝ Դիոգիսեսի մը համար ալ տակառի մը պարունակությունը շատ էր: Բայց միևնույն ձգտումին տարամեն ձևերը կմնան անոնք, վասնզի Մակեդոնացին իր իսկ բերնով պիտի հայտարարեր.

— Եթե ես Աղեքսանդր չըլլայի, պիտի ուզեի Դիոգիսես ըլլալ:

Սուկրատ «Ծանի՛ր գրեզ» կպատգամեր, ո՛չ հարկավ իբրև զգաստ ինքնագիտակցություն մը լոկ, այլ լայն անճանաճանաչում, որով կուզեր խորաչափել մարդկային ուժերուն և արժեքներուն տարողությունը և որուն մեջ կիմտրեր կատարյալ մարդու իր մտատիպարը: Ժամանակակից հեղինակ մը շատ

գեղեցիկ կեդրակացնե. «Ինքզինք ճանչնալ, վերջին հաշվով, գԱստված ճանչնալ է»։ Պղատուն բարիին բարձրագույն գաղափարին մեջ կգտնեք մարդու նմանությունը Աստուծո հետ՝ աստիճանական կատարելագործմամբ։ Չարեն փախուստ, կագոարարեր, որպեսզի հասնինք աստվածության կարելի և ամբողջական նմանեցման։ Եվ ահա ան, Շշմարտության ու Արդարության դարևանդներուն վրա բարձրացուցած մարդը՝ հարաբերիլ կուտար Աստուծո հետ։ Եվ վերջապես, Արիստոտել, ավելի իրատես և դրապաշտ՝ կուգա «մարդու վերափոխությունը Աստուծո» սկզբունքը, հակառակ իր խնամյալ վերապահության, գտնելու մարդկային էության ամբողջական ու Աերդաշնակ ծաղկման մեջ։ Եվ այս պայես, հարատև որոնումներով, կշարունակվի մինչև Քանթ, Հեյել, Ծոբենհաուեր և Նիցչե՝ հասնելով արդի ժամանակներու Պերկյունի և Մորիս Պրևստելի մը բարոյագիտական վարդապետություններուն։ Արդյոք Նարեկա սրբակյաց Մոնազը իր անկատարության խելահեղ տառապանքեն չէ՞ր, որ «կճենճերեր» և դեպի Աստուծո կատարելության դիրքերը իր ունեցած անհուն տենչանքին մեջ կաթվածահար կրլլար կարծես։ Մինչ Ծնորհային կմաքրագործեր, կըսրբացներ ինքզինք հեզամբմունջ պաղատանքի մը մեջ. «Եւ ողորմես՝ քո արարածոց և ինձ բազմամեղիս»։ Բոլոր ժամանակներու մեջ մարդը իր ճակատագրին այս կոչումով, թող ուրիշներ ըսեն՝ խորհուրդով, պիտի մնա մարդկային իմացական բովանդակ գործուներությանց գլխավոր մտասևեռումը։ Կատարելության սկզբունքը Աստուծո դիտումն (consideration) է իբրև անհրաժեշտ օրենք կատարելության բոլոր որոնումներուն մեջ։

Կատարյալին պատկերը, սակայն, այն չէ, ինչ որ գերմարդու գաղափարը։ Գերմարդը վայրագ ու այլամերժ նկարագիր մը ունի՝ եսակեդրոն բնավորություններու հատուկ բիրտ այլուրացությամբ։ Գերմարդը արգավանդութենե ավելի կյանքի վրա ճնշող ծանր բեռ մըն է և բունակալ մը՝ իրավունքներու տարադես տրամադրություններով։ Գերմարդը չի կրնար ըլլալ հանձնարարելի այն օրինակը, որ մարդկության ընդհանուր ձրգտումներուն հասանելի բարձրության վրա կգտնվի։ Իր նկատակին հասնելու ճամփուն վրա ան՝ գերմարդը, կպարտավորվի չճանչընալ ոչ ոք ու չգթալ ոչ մեկուն։ Ո՛չ վատը, ո՛չ լավը, ո՛չ բարձրը, ո՛չ բարձրագույնը և ո՛չ նույնիսկ ինքզինք։ Խիղճ չունենալ ո՛չ ուժեղին և ո՛չ ալ տկարին հանդես։ Իշխողներու բարոյականություն մը, որ ամբողջովին պետք է տարբերի հպատակներու բարոյա-

կանությունեն և հերքե գայն։ Եթե, ստուգիլ, Չարաթուստրայի մը բերնով բարբառող գերմարդ մը հնարավոր է հեղինակի նկարագրածին պես՝ «Մարդը բան մըն է, որ պետք է հաղթահարվի», դեպի իր տիպային դիրքերը ունեցած վերելքով, սպա այդ վերելքը բաժանում մը, հետացում մըն է մեզմե, նմանական կապերու խզում մը, որով մարդը կայլակերպի և կդառնա նվազ մարդկային, հետևաբար նվազ ընդհանրական և իրեն միանալու առնչակցական կարելի տարածությունը կջնջե ու կխլե մեզմե։ Եվ ահա այդ իսկ պատճառով ան մեզի չի՝ պատկանիր, և մենք չենք կրնար այդպիսին խորունկ սիրով մը պաշտել։ Եթե գերմարդը պաշտումի առարկան է, որպես այդպիսին, պետք է անպայմանորեն նախ ի՛նքը մեզի գա, պետք է մեզի իջնե, որպեսզի մեզ իրեն տանի։ Գերմարդը, վերջին հաշվով, իր իրագործման՝ վերջնագույն սահմանին վրա, ուժի տիրապետությունն է, իսկ մարդկությունը կարտո է սիրո՝ հաղթահակի։ Այս անգամ ալ, ինչպես միշտ, Քրիստոս է, որ կբերե լուծումը այս բարդ խորհուրդներուն։ Եթե Քրիստոս Աստված էր, մարդ դարձավ, եթե գերմարդ էր, հասարակին պարզությունը հագավ։ Եվ Ան եկավ, որպեսզի մարդը տանի ոչ թե դեպի երկբալելի գերմարդը, այլ՝ սպահով աստվածությունը։ Այսինքն՝ դեպի կատարելություն, դեպի բյուրեղացում, դեպի ազնվացում ու ամբողջականացում։ Գերմարդը հոռետեսությունն է մարդ-իրողության, իսկ քրիստոնեությունը՝ պանծացումը մարդու լուսավոր էության։

Կկարծենք, որ աշխարհային ազդակներն և գործոններն չբավարարված, անգոր և հուսահատ մարդու հոռետեսությունն էր, որ ստիպեց Կոթոմա Պուտտուն, ի գին անհասկրնալի խաղաղության մը երագին, մարդուն մեջեն ջնջել և ուրանալ մարդուն անձը, հավատացյալը առաջնորդելով դեպի Նիրվանա՝ գերագույն անէացում, տրված ըլլալով, որ մարդուն տանջանքները իր կիրքերեն կրծնին, և հետևաբար՝ իբրև դարման, անձին մահացում, ինքնուրացում կթելադրեր։ Մինչդեռ որքա՛ն տարբեր է Քրիստոս։ Ոգեկանի կարելի և անհերքելի հաղթանակներուն տեսիլքով խանդավառ՝ ճամփա ինկավ Ան։ Բերավ կիրքերու տիրապետության առջև ո՛չ թե պարտություն, այլ անոնցմե ազատագրում, ո՛չ թե անձի մահացում, այլ անոր կատարելագործումը։ Երբ մեկը կուրանա ու կծխտե, մյուսը կընդունի ու կվավերացնե։ Երբ մեկը կոչնչացնե, մյուսը կապրեցնե, կըվեհացնե և մարդը կվերադարձնե իր նախահայրն ստեղծած Արարչի պատկերին։

Ահա թե ինչո՛ւ մեկուն մեջ նահանջի պարտ-  
վողապաշտ ոգին մյուսին քով կվերածվի  
հաղթության փառապասկի:

Տեղին է այստեղ ոգեկոչել մարդկային հո-  
գեկան ու մտավոր ճիգերուն բուն խորքը  
հանդիսացող այն հուզիչ ճշմարտությունը,  
որ այնքան խոռվիչ զգայնությամբ մը երգած  
է մեծ ու դժբախտ քանաստեղծ մը.

Borné dans sa nature, infini dans ses vœux,  
L'homme est un Dieu tombé qui se souvient  
des cieux.

Եվ հիրավի, երկինքներու երազներեն լու-  
սավորված ճամփուն մեջ է, որ պիտի գան  
պտղավորիլ մարդկային ճիգերը, որոնցմով  
ինքզինք կատարելագործելու անդուլ վերել-  
քին մեջ հումպետս վատնված ջանքեր պիտի  
չմնան մարդուն պայքարները, հուսահատու-  
թյունները, խարխափումները և արցունքնե-  
րը, որոնք ոչ թե իր կարողություններուն ա-  
պիկար ցուցանիչներն են, այլ իր իսկ արժե-  
քը կկազմեն.

...C'est vraiment. Seigneur, le meilleur  
témoignage  
Que nous puissions donner de notre dignité  
Que cet ordent sang'ot qui roule d'âge en âge  
Et vient mourir au pied de votre éternité.

\* \* \*

Կա՞ արդյոք այս աշխարհի վրա մարդու  
ձգտումներուն բարձրագույն ու ազնվագույն  
հարացույց մը, որուն վրա կենտրոնաձգվեին  
մեր բոլոր տենչերը, մեր բոլոր կարոտներն  
ու ազնիվ փառասիրությունները:

Անշո՛ւշտ: Եվ ատիկա կատարելության  
տեսլականն է մարդու մեջ: Ծեքսպիր ամե-  
նեն ավելի Մարդը կզնահատեր մարդուն  
մեջ: Եվ ասիկա պետք է հասկնալ՝ կատար-  
յալ Մարդը, իր տեսակին կատարելությունը:  
Կթ՛վի, որ ատիկա մարդ արարածին անդուլ  
կատարելագործումն է ինքն իր մեջ, նկարա-  
գրի կերտումը և բարոյականի մշակումը:  
Մեկ խոսքով՝ հերքումը իր անձավաբնակ  
նախատիպին: Մարդ ինքզինք կենդանական  
աշխարհի պատկանելիությունեն կազատա-  
գրե միայն բարոյականությամբ: Մտքի, տա-  
ղանդի և ձիրքերու փայլուն կարողությունե-  
ները կրնան ապահովագրել մարդը, բայց  
չե՛ն բարձրացներ: Իսկ բարձրանալու հա-  
մար առաջապահ գծի վրա բարոյականու-  
թյուն է պետք: Մարդը, ինչքան ալ տկար ու  
թույլ, մա՛րդ է և կոտորարի կենդանի ըլլալե,  
որքան ալ համեստ «ձիրքերու» տեր ըլլա:  
Թող «կարողություններու» պատիր շլացում-  
ները չգիտնվցնեն մեզ և թող չբռնադատեն  
մեր միտքն ու սիրտը իրենց հեշտին ստըր-  
կության: Բարոյականության կատարելու-

թյունը թող գա իշխելու մեր մեջ, որ մերն է,  
մեզի պարգևված շնորհ մը, և թող անոր կո-  
րովը ամրացնե մեր սիրտերը: Կկարծե՞ք  
արդյոք, որ այս աշխարհի վրա սուտի ու  
կեղծիքի դեմ մաքառում մը ավելի դյուրին  
գործ է, քան զինված զորաբանակի մը դեմ  
կովիլը: Արդյոք արդարության մը անտես-  
ված իրավունքներուն պաշտպանությունը ա-  
վելի քի՞չ զոհողության և անձնուրացության  
կկարոտի, քան ասպատակված քաղաքի մը  
անմեղ բնակչության ազատագրությունը:  
Եվ վերջապես՝ ճշմարտության մը սիրուն  
վճռական արիություն մը նվա՞զ հերոսական  
է, քան հայրենիքի պաշտպանության արբա-  
զան պարտքը: Արդարև, ատոնք միևնույն ա-  
ռաքինության մեծագույն կանոնները պիտի  
մնան, միևնույն գործոնները՝ մարդը իր կա-  
տարելության տանող: Երբեմն նույնիսկ, ըն-  
կերային կյանքի մեջ, հոգեբանական ու շա-  
հասիրական ինչ-ինչ շարժառիթներով կա-  
տարված ճշմարտագանցություններու դի-  
մաց, ի խնդիր բարոյական սկզբունքներու,  
ավելի մեծ չափով դյուցազնություն կպա-  
հանջվի, քան ռազմի դաշտի վրա:

Յուրաքանչյուր բարոյականություն կար-  
գավորված գաղափարական հավատք մը  
կենթադրե: Բարիին և ժշմարիտին տեսիլ-  
քով համակված մեր մարդու բարոյական  
կատարելագործությունը մենք կսպասենք  
Աստուծո և Հավատքի ուղիներեն: Կյանքը  
Աստուծո օրենքներով պետք է ներդաշնակ-  
վի, և հոգին տիրապետե նյութին վրա: Այլա-  
պես մարդկության գլխուն թափվող աղետնե-  
րը վերջ պիտի չունենան: Աստված չէ, որ կը-  
ստեղծե մարդուն դժբախտությունները, այլ  
մարդը՝ ի՛նքը: «Ես համոզված եմ,—կըսե  
Ռոսսո,—որ Աստված արդար է, և արդարու-  
թյունը իր բարության հետևանքն է: Մարդոց  
անարդարությունը իրենց գործն է և ոչ թե  
Աստուծո: Որովհետև Աստուծո բոլոր ստո-  
րագելիներուն մեջ ամենահատկանշականը  
Բարությունն է, և Բարությունը իր հզորու-  
թենեն հառաջ կուգա: Ան բարի է, որովհետև  
մեծ է»: Ո՛հ, թող Աստուծմե մեզի տրված  
բարությունը, խոնարհությունը և գթությունն  
ըլլան մեր ուղեցույց աստղերը կյանքի ամեն  
մարզի մեջ և գործունեության բոլոր դաշտե-  
րուն վրա: Անշուշտ, աստվածային մեծու-  
թյան չե՛նք կրնար հասնիլ: Ատիկա վեր է  
մեր հողեղեն բնութենեն: Բայց մեծության  
կարելիություններն ունինք մեր մեջ որպես  
աստվածային շնորհ: Պարտինք այդ կարե-  
լիություններն օգտագործել, որովհետև մար-  
դու կատարելագործումը, մեծությունը Աս-  
տուծո պատվիրաններն արգասավորելու  
մեջ է, և մարդու ճշմարիտ կոչումը այս երկ-  
րի վրա Աստուծո սկսած գործին շարունա-  
կությունն է: